



Ռազմավարական և ընթացիկ պլանավորման բաժնի մասնագետ

Աշխատանքի նկարագրություն

Բյուջեի կանխատեսում Բանկի ընթացիկ ֆինանսական ցուցանիշներից ելնելով:

Աշխատանքային պարտականություններ

- Բանկի փաստացի հաշվեկշռային հոդվածների ու պլանային ցուցանիշների համեմատականի կազմում
- Բանկային համակարգի և Հայբիզնեսբանկ ՓԲԸ-ի համեմատական ցուցանիշների, ինչպես նաև ընդհանուր բանկի և մասնաճյուղերի ցուցանիշների վերլուծություն
- Բանկի խորհրդին ներկայացվող եռամսյակային վերլուծություն
- Բանկի և մասնաճյուղերի գործունեությունը կանոնակարգելու նպատակով անհրաժեշտ ներքին իրավական ակտերի մշակում
- Նոր բացվող մասնաճյուղերի հեռանկարային ծրագրի ֆինանսական ցուցանիշների կանխատեսում
- Այլ վերլուծություններ

Անհրաժեշտ պահանջներ

- Բարձրագույն կրթություն տնտեսագիտության կամ ֆինանսների ոլորտում
- Առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ ֆինանսաբանկային համակարգում
- Վերլուծական ունակություններ
- Ստեղծագործական և ռազմավարական մտածելակերպ
- Հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուների լավ իմացություն

- Microsoft Excel իմացություն և կիրառական որպես առավելություն
- Աճի և զարգացման ձգտում

Դիմելու ընթացակարգը

Ներկայացված պահանջներին համապատասխանող թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրականը hr@armbusinessbank.am հասցեին:

Վերջնաժամկետ՝ 24.03.2023թ.:

Խնդրում ենք նամակի թեմա (subject) դաշտը լրացնել նշելով պաշտոնը և Ձեր անուն, ազգանունը հետևյալ կերպ՝ *"Strategic and Current Planning Specialist - Name, Surname"*: